## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝** Նունե Եղոյան
**Հանձնաժողովի անդամներ՝** Լենա Լևոնյան, Քրիստինե Վարդանյան, Անի Բաղդասարյան, Հայարփի Խաչատրյան
**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Զալինյան

### 1. Հայտերի բացման մասին

**1.1. Հայտերի բացման.**

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ

- **օրը՝** 5 մայիսի 2016թ.

- **ժամը՝** 10:00

**1.2.** Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98»** ծածկագրով ընթացակարգի հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1. | **Ֆ/ա Իշխան Միրզոյան** |
| 2. | **Ա/Ձ Հրայր Մանուկյան** |
| 3. | **ՏԵՏ Ինվեստ ՍՊԸ** |
| 4. | **Ա/Ձ Էդուարդ Առուստամյան** |
| 5. | **ԱՆԱՆՈ ՍՊԸ** |
| 6. | **Վարդան Կիրակոսյան ՍՊԸ** |
| 7. | **ՋԻ ԷՍ ԷՅՋ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍՊԸ** |
| 8. | **Ֆոտոն ՍՊԸ** |
| 9. | **Արարատ Սննդի Կոմբինատ ՍՊԸ** |
| 10. | **ԲԻԳ ԼԱՅՖ ՍՊԸ** |
| 11. | **Գալիմա ՍՊԸ** |
| 12. | **Լիգա պլյուս ՍՊԸ** |
| 13. | **Ա.Ձ.Հրայր Ավագյան** |

**1.3. Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են:**

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.4. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան,** բացառությամբ.

* «Անանո» ՍՊԸ–ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ մասնակիցը հավելված 1-ը ներկայացված է հրավերին անհամապատասխան:

* «Ֆոտոն» ՍՊԸ–ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջներին նկատմամբ, այն է՝ մասնակիցը Հավելված 1-ում նշել է, որ 44-րդ չափաբաժնի ապրանքը հանդիսանում է ՌԴ արտադրության ապրանք, սակայն Հավելված 4.2–ում նշված չէ տվյալ չափաբաժինը:

Գնահատող հանձնաժողովը ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի համաձայն վերոգրյալը որակեց անհամապատասխանություն՝ ոչ գնային պայմանների մասով, համաձայն որի նիստը կասեցվեց և Մատակարարներին տրվեց 1 օր ժամանակ (մասնակցին ծանուցելու պահից հաշված) առաջարկելով այն շտկելու համար՝ կասեցնելով գնահատման նիստը:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Նունե Եղոյան |
| Անդամներ՝ | | Լենա Լևոնյան |
| | | Քրիստինե Վարդանյան |
| | | Անի Բաղդասարյան |
| | | Հայարփի Խաչատրյան |
| Համակարգող՝ | | Մ. Զաւինյան |